

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇՓԱԿԱՆՆԵՐԻ ՀՆՉՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (համաժամանակյա հայեցակետ)

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Համաժամանակյա հայեցակետում հին՝ գրաբարյան հայերենի շփական բաղաձայնների հնչաբանական բնութագրերի առանձին դիտարկումներ արել են Հ. Հյուբշմանը և Ա. Մեյեն: Դրանք հանգամանից քննության նյութ են դարձել Է. Աղայանի, Հ. Սուրադյանի և Է. Թումանյանի աշխատություններում¹: Հատկապես՝ առաջին երկուսի:

Հին հայերենի շփականներն էին՝ *q* [z], *u* [s], *ժ* [ž], *շ* [š], *վ* [v], *խ* [x] և *հ* [h]: Դրանցից առաջին չորսը երկշարք էին՝ լծորդություն կազմելով «ձայնեղություն~խլություն» հակադրությամբ (հմմտ. *q* [z] ~ *u* [s], *ժ* [ž] ~ *շ* [š]), իսկ մյուսները՝ միաշարք. *վ* [v]-ն² ձայնեղ էր և չուներ իր խուլ լծորդը, *խ* [x]-ն ոչ շնչեղ (պարզ) խուլ էր և չուներ իր ոչ ձայնեղ, ոչ էլ շնչեղ խուլ լծորդը³, իսկ *հ* [h]-ն խուլ էր՝ հազագային կամ կոկորդային տեղայնացումով և չուներ իր ձայնեղ լծորդը: Երկշարքերից *q* [z]-ն և *u* [s]-ն սուլական էին, իսկ *ժ* [ž]-ն և *շ* [š]-ն շչական:

1. Հին հայերենի երկշարք սուլականներն ու շչականները ձևավորել են երեք տիպի հնչույթաբանական հակադրություն: Այն է.

1) «Ձայնեղություն~խլություն» հատկանիշով: Հմմտ. *q~u. qtkq* «մթամած մաս՝ տեղ լուսատուների վրա, բիծ» ~ *qktu (qhsunj կմ qhsuh)* «զլխի երկար մագ, վարս, հեր», *կեզ*⁴ (> կիզ-ել) «այրել, տոչորել» ~ *կես*

¹ Տե՛ս Է. Բ. Աղայան, Գրաբարի քերականություն, գ. Ա, Հնչյունաբանություն, Եր., 1964, էջ 155-164, - *Туманян Э. Г. Древнеармянский язык. М., 1971, էջ 62-65, Հ. Գ. Սուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 241-279:*

² Նկատի ունենալով, որ *վ* [v]-ով նշանակված հնչական միավորի հնչույթաբանական և հնչյունաբանական արժեքների հարցը հայերենագիտության մեջ տարակարծությունների տեղիք է տվել, և, որպես կանոն, այն քննվել է *լ* [l]-ի և *ռ* [oʃ]-ի հետ հնչաբանական հարաբերակցության տեսանկյունից, այդ միավորին մենք կանդրադառնանք առանձին ուսումնասիրությամբ:

³ Արդի հայերենում *խ* [x]-ի ձայնեղ լծորդն է *ղ* [ʒ]-ն, որը հին հայերենում եղել է ձայնորդ (տե՛ս Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 173-182, Վ. Զ. Պետրոսյան, Հին հայերենի *լ* (l) և *ղ* (ʒ) ձայնորդների ծագումը և հնչաբանական արժեքայնությունը // ՎԷՄ, 2017, թիվ 3, էջ 97-105:

⁴ Հին հայերենում «կեզ» արմատն առանձին գործածական չէր, բայց հանդիպում է, օր.՝ *արեակեզ, բոցակեզ, ածխակեզ, դժխակեզ, անկեզ, ողջակեզ* և այլ բարդությունների կազմում՝ որպես երկրորդ բաղադրիչ: Բացի այդ, նրանից է առաջացել *կիզ-* հնչյունափոխ արմատը, որը նույնպես առանձին գործածական չէր (հմմտ. *կիզ-ել, կիզ-ելի*): Հետևաբար բոլոր հիմքերը կան հին հայերենում տարբերակելու նաև *կեզ ~ կես* հակադրություն:

(կիսոյ, -ոց) «ամբողջի երկու հավասար մասերից մեկը», - *հազ* (-ոյ) «թոքերում եղած օդի հանկարծական խոպոտ ձայնով ուղեկցվող արտաշնչումը» ~ *հաս* (-ի, -ից) «հասնելը. եկամուտ, տուրք», - *մագն* («մագ» գոյականի որոշյալ առումը) «մարդու գլխի մագեղեն ծածկույթը. մտրակ, խարազան» ~ *մասն* (-սին, -սունք) «մաս, հատված», - *յոյգ* (յոյգի, յուզից) «որոնում, շարժում, ծփանք» ~ *յոյս* (յուսոյ, -ով) «ակնկալութուն», - *գարդ* (-ու, -ուց) ~ «պերճանքի առարկա, գարդարանք» ~ *սարդ* (-ի, -ից) «սարդակերպերի դասին պատկանող կենդանի, խաչասարդ», - *պարզ* (-ոյ, -ոց) «զուտ, մաքուր. ոչ բարդ» ~ *պարս* (-ի, -ից) «թոկից պատրաստված ձեռքի հարմարանք՝ թշնամու վրա քար նետելու համար, պարսաստիկ», - *զուր* «ապարդյուն, անտեղի» ~ *սուր* (սրոյ) «երկսայրի հատող և խոցող զենք, թուր, նակ՝ կտրուկ, հատու», *զրահ* (-ի) «լանջապանակ» ~ *սրահ* (-ի) «մեծ սենյակ, դահլիճ». **Ժ~Չ.** *բաժ* (-ի, -ից) «մաս, բաժին. Արքունական տուրք» ~ *բաշ* (-ի, -ից) «կենդանիների, հատկապես ձիու վարսերը»⁵, - *ժահ* (-ու / -ի) «աղտեղություն, գարշահոտություն» ~ *շահ* (-ի, -ից) «օգուտ, վաստակ. խաղ, պար, ուրախություն»:

2) «Մուկականություն~շչականություն» հատկանիշով: Հմմտ. **զ~ժ.** *բազէ* (-ի, -ից) «գիշատիչ և որսորդ թռչուն, որին վարժեցնում են թռչունների որսի համար» ~ *բաժէ* (-եցի) (*բաժէլ*(/-եմ) «տուրք, մաքս առնել կամ տալ» բայի սահմ. նրկ. եզ. թ. 3-րդ դեմքը), - *խազ* «տհաս, խակ» ~ *խաժ* «հաստ, թավ», - *զանգ* «զանգակ կամ բոժոժ» ~ *ժանգ* (-ոյ, -ոց) «երկաթի կամ պղնձի մակերեսին օքսիդանալուց առաջացած կարմրագորշ փառանման շերտ»⁶, - *խուզէլ* (-եցի) «խուզարկել, որոնել. գրգռել» ~ *խուժէլ* (-եցի) «բռնի ուժով մտնել». **Չ~ս.** *խիշտ* (-ի/-ա) «անկողին» ~ *խիստ* (-ի, -ից / -աց) «կարծր, ամուր. դժվարին, բուռն», - *հաշտ* (-ի, -ից) «խաղաղասեր, բարեսիրտ. քավիչ, ներող» ~ *հաստ* (-ի, -ից) «ամուր, կարծր, սերտ», - *նուշ* (-ի / -ոյ) «նշենու պտուղը» ~ *նուս* (-ոյ, -ոց) «ուս, կոնակ, մանավանդ ձիու, փղի թիկունք, գավակ», - *ուշ* (-ոյ, -ով / -ի, -իւ) «հիշողություն, միտք» ~ *ուս* (-ոյ, -ոց) «մարմնի վերին մասը, որտեղ բազուկները կցվում են. մեջք, թիկունք», - *շար* (-ի, -ից) «մետաքսից թափանցիկ ու նուրբ գործվածք, շղարշ, քող» ~ *սար* (-ոյ, -ոց) «լեռան գլուխ՝ գագաթ», - *փռշի* (-շույ, -շեաց) «փշրված՝ մանրամաղ հող» ~ *փոս* (-ի) («փոս» գոյականի սեռ.-տր. հլ.) «զուր, խորխորատ. ջրանցք», - *քշէլ* (-եցի) «վանել, հեռացնել, առաջ վարել» ~ *քսէլ* (-եցի) «խառնակչություն

⁵ Ըստ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, Եր., 1979, էջ 438:

⁶ Այս հակադրությունը նշում է Է. Աղայանը (տե՛ս Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 157: Գրաբարի բառարանները (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի բառարան, Անթիլիաս-Լիբանան, 2004), ինչպես նաև Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» (այսուհետև՝ ՀԱԲ) (հ. II, Եր., 1973) ունեն *զանգակ* ձև, բայց ոչ *զանգ*: Կարծում ենք՝ ինչպես «կեզ»-ի համար, այս դեպքում ևս «զանգ»-ը կարող է ընդունվել որպես հակադրության եզր՝ առնվազն *զանգ*- ձևով, այսինքն՝ իբրև բարդության սկզբնաբաղադրիչ, որն առկա է բազմաթիվ բարդությունների կազմում (հմմտ. *զանգականի, զանգակազանչ, զանգակատուն, զանգիկ* և այլն):

անել, գրպարտել): Վերոհիշյալ օրինակներից երևում է, որ *ժ - q, շ - u* գույզերի միակ տարբերակիչ հատկանիշը «սուլականություն ~ շչականություն» հակադրությունն է, հետևաբար այդ հատկանիշները նույնպես հնչույթաբանական արժեք ունենին հին հայերենում:

3) Միաժամանակ «ձայնեղություն~խլություն» և «սուլականություն~շչականություն» հատկանիշներով: Հմմտ. *ժ~ս. վարժել* (-եցի) «վարժեցնել, սովորեցնել. կրթել, խրատել» ~ *վարսել* (-եցի) «գետին գամել, հողի մեջ մխել, պատին մեխել»,- *ժտել* (-եցի) «թախանձել, աղաչել. իշխել, լրբանալ» ~ *ստել* (-եցի) «սուտ ասելը, խաբել, դրժել», *ժահ ~ սահ* «գունդ, բանակ. ընձյուղ, ծիլ. «սահիլ» բայի արմատը, որը առանձին անգործածական է», *q~շ. գեգ ~ գեշ* (գիշոյ, -ոց) «մեռած մարդու կամ կենդանու դիակ, լեշ»,- *մազ ~ մաշ* «մաշված, փտած, ապականված»,- *զէն* (զինու, -ուց/-ից) «զենք, զրահ» ~ *շէն* (շինի / -նոյ, -աց / -ից) «բարեկարգ, վայելուչ. գյուղ, շինություն»,- *զինել* (-իմ) (-եցայ) «սպառազինվել, զենքի դիմել» ~ *շինել* (-եցի, -աց) «շենացնել, ստեղծել, հորինել, նորոգել»:

Եթե վերոհիշյալ երեք տիպերի հնչույթաբանական հակադրություններն ընդհանուր առմամբ սահմանափակվում են նշված օրինակներով, ուստի բերված ցանկը կարող է վերջավոր համարվել, ապա այլ հնչույթների հետ տարբերակիչ հակադրությունների թիվը զգալիորեն մեծ է, ուստի այդպիսի ցանկ ներկայացնելն իմաստ չունի: Հմմտ. *թագել* (-եցի) «վագել, արշավել» ~ *թաթել* (-եցի) «թաթով հակառակորդի ոտքին խփել՝ վայր գցելու նպատակով» ~ *թաղել* (-եցի) «մեռելի դիակը հողի մեջ դնել և հողով ծածկել»,- *իժ* (-ի, -ից) «իժերի ընտանիքին պատկանող թունավոր օձ» ~ *իմ* (-ոյ, -ում. *ես*-ի սեռ. հլ. որպես ստացական դերանուն. *իմը* կամ *իմս*) ~ *իզ*- («էզ»-ի հնչունափոխված արմատը, օր. *իզ-արար* «իբրև իգական սեռի») ~ *իջ*- («էջ»-ի եզ. սեռ.-ի *իջի*, արմատը) ~ *-իւ* (*ի* հոլովման գոյականների գրծ. հլ. ցուցիչ. հմմտ. *բառիւ* «բառով», *կարօտիւ* «կարոտով» են),- *գեշ ~ գետ*- (>*գիտ*-եմ) «գիտենալ» բայի արմատը (*անգետ* «տգետ, անտեղյակ», *անգիտանալ* «անգետ լինել, չիմանալ») ~ *գեշ* (գիշոյ) «թաց, խոնավ» և այլն:

Ակադ. Է. Աղայանը, հին հայերենի *q [z], u [s], ժ [ž]* և *շ [š]* շփականների հնչույթային կարգավիճակն ընդունելով հանդերձ, որոշակի դիրք (եր)ում, այն է «սուլական / շչական + հպական», նաև լրացուցիչ բաշխման հարաբերություններ է տարբերակում, մի կողմից, ձայնեղ և խուլ սուլականների, մյուս կողմից՝ համապատասխան շչականների միջև: Ըստ այդմ, սուլական ու շչական ձայնեղները՝ *q, ժ*, հանդիպում են միայն ձայնեղ հպականներին, իսկ համապատասխան խուլները՝ *u, շ*, միայն խուլ հպականներին նախորդող դիրքերում: Այդ սկզբունքից բացառությունները, նրա կարծիքով, պայմանավորված են կա՛մ ձևաբանական գործոններով (հմմտ. *զքեզ* (դու-ի եզ. թ. հյց. հլ.), *զդրունս* (դուռն-ի հզն. թ. հյց. հլ.), կա՛մ էլ թվացյալ են, ինչպես բառակազմի *սզ-*, *զո-*, *ժպ-*, *ժո-* տիպի հաջորդականությունների դեպքում, որովհետև դրանց միջև ար-

տաբերվում է գաղտնավանկի *ը* ձայնավորը (հմմտ. [սըգամ], [զըտումն] «գտելը. մաքրություն», [ժըպիտ], [ժըպիրի] «լիրք, աներես», [ժըտեմ] «թախանձել, աղաչել»), որոնցից առաջին երկուսում այն *ու>ը* հնչյունափոխության արդյունք է: *ժպիրի* բառի համար ենթադրվել է իրանական ծագում, ուր այդ բառը *ժ* (ձ)-ից հետո ունի *ի* (i)՝ *ažipθra/aži-pivra* «օձահայր»: Այսինքն՝ առկա է *ի>ը* հնչյունական անցում⁷:

Թեպետև *ժպիտ* և *ժոեմ* բառերն առայժմ ստուգաբանված չեն, բայց նկատի ունենալով մի կողմից՝ այն, որ հայերենի *ժ* (ձ) ունեցող բառերը, իբրև կանոն, ունեն իրանական ծագում⁸, իսկ մյուս կողմից՝ այն, որ հայերենի հնչյունափոխական օրինաչափության համաձայն բառամիջում՝ բաղաձայնների միջև արտաբերվող *ը* (ə)-ն որևէ այլ ձայնավորի կամ երկբարբառի/երկբարբառակերպի, հիմնականում՝ *ի* (i)-ի կամ *ու* (ou)-ի, հնչյունափոխության արդյունք է, կարելի է ենթադրել, որ *ժպիտ* և *ժոեմ* բառերը նույնպես բնօրինակ լեզվում, ըստ ամենայնի՝ իրանական բարբառներից մեկում, *ժ* (ձ)-ից հետո ունեցել են ձայնավոր, որն էլ, հայերենում անցնելով հնչյունափոխական որոշակի աստիճաններով, վերածվել է *ը* (ə)-ի: Հետևաբար ինչպես *ժի-* (*ժիտեմ/իմ*), *ժպ-* (*ժպիտ*), *ժո-* (*ժոագոյն* «ավելի աներես, անամոթ»), *ժք-* (*ժքթեմ* «ցատեցնել (ջուրը)»), այնպես էլ *ջ-* (*ջիւն* «սուլոց») բաղաձայնական հաջորդականություններում արտաբերվել է *ը* (ə), անկախ այդ բառերի բնիկ կամ փոխառյալ լինելու հանգամանքից:

Ինչպես վերը տեսանք, թեպետև ոչ մեծաթիվ բառերում, բայց և այնպես հին հայերենում կային *q~u* և *ժ~ը* իմաստատարբերակիչ հակադրություններ, որոնք դրսևորվում էին ձայնավորներին նախորդող, ինչպես նաև ձայնավորներին ու ձայնորդներին հաջորդող դիրքերում: Նաև ոչ պակաս կարևոր է, որ նշված շփականներն ունեին իմաստատարբերակիչ գործառույթի բավականին լայն ընդգրկում, որը կասկածի տեղ չի թողնում նրանց լիարժեք հնչույթային կարգավիճակն ընդունելու համար՝ չնայած է. Աղայանի նշած դիրքային, ավելի ստույգ՝ հնչյունական միջավայրով պայմանավորված սահմանափակումներին:

Եթե, օրինակ, *գստի* «ագորի», *գսպել*, *գտել* «հալեցնելով մաքրել» բառաձևերում ակնհայտ է «q+(ը)+խուլ շփական», իսկ *սգամ* «սգում եմ», *սղոց*, *սմբակ*, *սնդուկ*, *սրագլուխ*, *սրբակեաց* տիպի ձևերում՝ «u+(ը)+ձայնեղ/ձայնորդ» հաջորդականությունը, որովհետև *qu-*, *qu-*, *uq-*, *uղ-*, *սմ-*, *սն-*, *սր-* արմատները, համապատասխանաբար, *զիստ*, *զուսպ*, *զուտ*, *սուզ*, *սուղ*, *սումբ* (< պիլ. *sumb*, *sunb*/**sumbak*/), *սուն*, *սուրբ* անհնչյունափոխ ձևերի տարբերակներն են, որոնցում տեղի են ունեցել

⁷ Տե՛ս **Հր. Աճառյան**, ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 631-632, **Է. Բ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 159, **Պետրոզ Ջանուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Եր., 2010, էջ 282:

⁸ Բացառություն են *իժ* և բարբառային *լիժ* «...» բառերը, որոնք հ.-ե. Ժառանգություն են հայերենում: «Լիժ»-ի ստուգաբանության համար տե՛ս **Պ. Բ. Ջանուկյան**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 135:

h>ը և *ու>ը* անցումները, ապա նույնը չենք կարող ասել, օրինակ՝ *սնար* «գլխավերև. գլուխը դնելու տեղը»⁹, *սրահ* (< պիլ. *srāh) «մեծ սենյակ», *սրուակ* (< պիլ. sruv, srūv) «յուղի շիշ», *սրուն(-ք)* (< հ.-ե. *krūsni-/ *krūsni-) «ոտք, ճիտք» բառերի *սն-*, *սր-* հաջորդականությունների մասին, որոնց բնիկ ձևերը «*u + ձայնորդ*» հաջորդականության մեջ ձայնավոր չունեն։ Պիտի կարծել, որ երկրորդ տիպի բառերը փոխառվելուց հետո ենթարկվել են հայերենի արտասանական օրինաչափությանը, ըստ որի՝ դրանցում նույնպես բաղաձայնների միջև արտաբերվել է *ը* (օ), քանզի հատկապես բառասկզբի դիրքում հայերենին խորթ էր բաղաձայնական կուտակումը։

Հետևաբար դասական գրաբարում (համաժամանակյա հայեցակերպ) *q*, *u*, *ժ*, *շ* շփականներն ինքնուրույն հնչույթներ էին։ Բհարկե, բացառված չէ, որ *q* [z], *u* [s], *ժ* [ž] և *շ* [š] երկաստիճան շփականների առաջացման փուլում (նախագրային հայերեն) ձայնեղության-խլության հատկանիշներով հակադրված *q~u* և *ժ~շ* զույգերը միմյանց նկատմամբ գտնվել են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, բայց այդ հարցի քննությունը վերաբերում է տարածամանակյա հնչույթաբանությանը։

II. Ի տարբերություն երկշարք շփականների, *խ* (x) և *հ* (h) միաշարքերի հնչույթաբանական բնութագրերի հարցը համաժամանակյա հայեցակերպում խնդրահարույց չի եղել։ *խ* (x)-ի և *հ* (h)-ի իմաստատարբերակիչ հակադրությունների դաշտը բավականին լայն է։ Նրանք տարբերակիչ հակադրություններ են ստեղծում.

1) Ըստ արտաբերության եղանակի. ա) հպականների հետ (հմմտ. **խ~գ.** *խայթ* «փուշ, խայթոց» ~ *գայթ* (-ի, -ից) «գայթելը, սայթաքելը», - **խ~կ.** *խազվ* «ժողովրդական խռովություն. կռիվ» ~ *կազվ* «պատրաստ, զինված. հանդերձանք», - **խ~ք.** *խիթ* (խիթոյ, -ոց) «ծակոց. խոց» ~ *քիթ* (քիթի), - **հ~գ.** *հավ*² (-ոյ) «լկամ, սանձ. չափ» ~ *գավ* («գավ» բայի սահմ. նրկ. եզ. թ. 3-րդ դ.), - **հ~կ.** *սահ* «զունդ, բանակ» ~ *սակ*²). բ) հպաշփականների հետ (հմմտ. **խ~ծ.** *խնկել* (-եցի) «խնկով օծել, զմուսել» ~ *ծնկել* (-եցայ) «ծնկի գալ. ճնշվել», - **հ~չ.** *հոզալ* (-ացայ, -ցի՛ր) «մտատանջվել, հոգ տանել» ~ *չոզալ* (չոզայ, -ար). «երթալ» բայի անց. կատ.). գ) շփականների հետ (հմմտ. **հ~վ.** *հարք* (-ց, արանց. «հայր» բառի հզն. անվն. հլ.) ~ *վարք* (-րուց, -րուք) «վարքագիծ», - **հ~շ.** *հէն* (հինի, -նից) «ավազակ. ասպատակություն» ~ *շէն* (շինի/-նոյ, -աց) «բարեկարգ, բնակելի. գյուղ», - **հ~ս.** *հակ* (*հակք*) «հակառակ. բեռան մեծ կապոց» ~ *սակ*² (-ի, ից) «տուրք, հարկ», - **խ~շ.** *խեղ* (-ի, -աց) «խեղանդամ. տգեղ» ~ *շեղ* (-ոյ) «խոտորնակ, թեք», - **խ~դ.** *ախտ* (-ի, -ից) «վարակիչ հիվանդություն. արատ» ~ *աղտ* «կեղտ. տիղմ»).

2) Ըստ արտաբերության տեղի. ա) երկշրթնային ձայնեղների ու

⁹ Ծագումն անհայտ է (տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. IV, 1979, էջ 235, **Գևորգ Զահուկյան**, ՀՄԲ, էջ 685):

ձայնորդների հետ (հմմտ. **խ~բ.** *խաժ* «կապտականաչ, թավ» ~ *բաժ* (ի, -ից) «մաս, բաժին. արքունական տուրք», - **խ~մ.** *կախել*¹ (-եցի) «կախադան հանել» ~ *կամել* (-եցայ, -մեա՛ց) «կամենալ, ուզել»): **բ** առաջնալեզվային ձայնեղների ու ձայնորդների հետ. **խ~զ.** *խեղ* (-ի, -աց) «խեղանդամ. տգեղ» ~ *զեղ* (*զեղուլ* «լիուլի լցնել. դիզել» բայի հրամ. եղ.), - **խ~ժ.** *խտագոյն* «խիտ առ խիտ» ~ *ժտագոյն* «ավելի հանդուգն աներես», - **խ~լ.** *խնուլ* (*խցի, խի՛ց*) «փակել, խցանել» ~ *լնուլ* (*լցի, լի՛ց*) «լցնել. ավարտել. հազեցնել», - **հ~լ.** *կահ* (-ի, -ից / -ու, -ուց) «սպասք, կարասի, ունեցվածք» ~ *կալ՛*³ («ունել (կալուլ)» բայի բուն հրամ. եզակին՝ *բոնի՛ր*), - **հ~ն.** *համակ*² «ամբողջովին. միշտ» ~ *նամակ* (-ի, -աց) «թուղթ, բարևագիր, հրովարտակ»): **գ** առաջնալեզվային խուլերի հետ (հմմտ. **խ~ս.** *խարել* «դաղել» ~ *սարել*¹⁰ «դողալ, սարսռել», *կախ* «կախված» ~ *կաս* («կալ» բայի սահմ. նրկ. ժ. եզ. թ. 2-րդ դ.՝ «կանգնած ես, մնում ես»)), - **հ~ս.** *հուղ* «հյուղ» ~ *սուղ* (-ի, -ից) «նվազ, քիչ. նուրբ», - **դ** միջնալեզվային ձայնորդի հետ (հմմտ. **հ~յ.** *հոյզ* (հուզոյ) «խեժ, կռեզ» ~ *յոյզ* (-ից, -իւք) «որոնում, շարժում», *պահ* (-ու, -ուց) «պահելը. կարճ ժամանակ» ~ *պայ* (-ի) «ոգի»), - **ե** հետնալեզվայինների հետ (հմմտ. **հ~կ.** *համար* (-ոյ, -ոց/-ու, -ուց) «թիվ, գումար» ~ *կամար* (-ի, -աց) «մեջքի գոտի. կամարակապ շինվածք», - **խ~կ.** *կախել* (-եցի) «կախադան հանել» ~ *կամել* (-իմ) «կամենալ, ուզել»): Նշվածներից բացի, *խ* (x) և *հ* (h) միաշարքերը հնչույթաբանական հակադրություններ են ստեղծում նաև հնչույթային զրոյի հետ (հմմտ. **խ~ թ.** *խաղ* (-ու, -ուց) «ժամանցի նպատակ ունեցող զբաղմունք. մրցություն» ~ *աղ* (-ի, իւ)) և մեկը մյուսի հետ (հմմտ. **խ~հ.** *խամրել* (-եցի) «թառամել. տկարանալ. Եղծվել» ~ *համրել* (-եցայ) «համր դառնալ, լեզուն կապվել», - *խոր* (-ոյ, -ոց) «խորունկ. Սաստիկ» ~ *հոր*² (-ի, -ից) «աղջկա ամուսին, փեսա», - *խաղ* (-ի, -ից) «ծանծաղ, կանգնած ջուր, ճահիճ» ~ *հաղ* «անգամ»):

Սակայն վերոհիշյալ հնչույթաբանական հակադրություններից *խ* (x)-ի և *հ* (h)-ի հնչաբանական բնութագրերի համար, այն է՝ ինքնուրույն հնչույթներ են, թե՛ այլ հնչույթի դիրքային տարբերակներ, *էական* (ռելևանտ) նշանակություն ունեն միայն տարբերակիչ հակադրությունները հետնալեզվայինների և շփականների հետ, որովհետև *խ* (x)-ի և *հ* (h)-ի ձայնեղ լծորդների բացակայության պայմաններում առաջինները չեն կարող նվազագույն գույգով հակադրություններ ձևավորել ձայնի և աղմուկի հարաբերակցության հատկանիշով: Ըստ այդմ, հին հայերենի *խ*-ի համար հնչույթաբանական կլինեն *խ~կ*, *խ~հ*, *խ~ս*, *խ~զ*, *խ~ժ* նվազագույն գույգերով հակադրությունները, իսկ *հ*-ի համար *հ~կ*, *հ~ս*, *հ~շ*, *հ~վ*, *հ~խ* նվազագույն գույգերով հակադրությունները: Նշվածներից *խ~կ* հակադրությունը ձևավորվում է ըստ արտաբերության եղանակի, այն է՝ «շփականություն~հպականություն» հատկանիշով, որով-

¹⁰ Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 187: Այս բառը չունեն ՆՀԲ-ը և Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանը» (Անթիլիաս, 2004):

հետև *խ*-ն և *կ*-ն նույնն են արտաբերության տեղով՝ հետևալեզվային են, իսկ *խ~ս*, *խ~զ*, *խ~ժ*, *խ~հ*, *հ~կ*, *հ~ս*, *հ~շ*, *հ~վ* հակադրությունները ձևավորվում են ըստ արտաբերության տեղի հատկանիշի, որովհետև նույնն են արտաբերության եղանակով. բոլորն էլ շփական են:

Հետևաբար, վերը ներկայացվածներից *խ~զ*, *խ~ք*, *խ~բ*, *խ~ղ*, *խ~մ*, *խ~լ*, *հ~ն*, *հ~յ*, *հ~շ* հակադրությունները, չնայած իմաստատարբերակիչ գործառույթ իրականացնելու իրենց ներուժին, առաջնային նշանակություն չունեն *խ* (x)-ի և *հ* (h)-ի հնչույթաբանական բնութագրերի բացահայտման առումով, որովհետև դրանցում *խ~հ* հակադրությունը չի իրացվում հնչույթաբանական հատկանիշների նվազագույն զույգի միջոցով: Նշված զույգերում հակադրությունը տեղի է ունենում երկու հատկանիշով: Օր.՝ *խ~զ* զույգում *զ*-ն հակադրվում է *խ*-ին միաժամանակ «հպականություն ~ շփականություն» և «ձայնեղություն ~ խլություն» (ավելի ճիշտ՝ «ձայնեղության բացակայություն», որովհետև *զ*-ն *խ*-ի լծորդ ձայնեղը չէ, այլ *կ*-ի և *ք*-ի) հատկանիշներով, *խ~ք* զույգում, «հպականություն ~ շփականություն» հատկանիշով հակադրությունից բացի, *ք*-ն *խ*-ին հակադրվում է նաև «շնչեղություն ~ ոչ շնչեղություն» կամ «շնչեղության բացակայություն» հատկանիշով: Բացի այդ, *խ* (x)-ն կամ *հ* (h)-ն երկհատկանիշ հակադրությամբ զույգերում կարող են մասնակցել նաև իբրև մեկ այլ հնչույթի դիրքային տարբերակներ, այսինքն՝ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվել միմյանց նկատմամբ կամ այլ հնչյունների նկատմամբ, եթե ներկայացնում են տարբեր հնչույթներ:

Սակայն հին հայերենում, նշվածներից բացի, դիտարկվել են նաև **հ/խ**-ով և **հ/յ**-ով բառային զույգեր, որոնցում այդ բաղադրիչները նույնական են իրենց գործառական նշանակությամբ, այսինքն՝ իմաստատարբերակիչ արժեք չունեն (հմտ. *հմայել* (-եցի) «կախարդել, դյութել» - *խմայել*, *հաշմ* (-ի, -ից) «խեղանդամ» - *խաշմ*, *հաշումն* (-շման) «հյուծում, ծյուրում» - *խաշումն*, *հրասախ* (-ի, -ից) «փարսախ» - *խրասախ*, *խոհ(ա)կեր* (-ի, -աց) «խոհարար» - *խոխկեր*, *խոհեր* (-ի, -աց) «գարշահոտ ցեխ, տիղմ» - *խոխեր*, *հուղ* (-ղից) «հյուղ» - *խուղ* և այլն):

Ըստ պրոֆ. Է. Աղայանի՝ այդպիսի բառային տարբերակների առաջացումը հետզհետե արդեն երևույթ է, որի պատճառը միջին հայերենի շրջանում որոշ բարբառներում սկզբնավորված *հ>խ* հնչյունափոխությունն է, որը թափանցել է նաև գրաբարյան մատյաններ: Դասական գրաբարի շրջանում *հ* (h)-ն և *խ* (x)-ն չէին կարող միմյանց նկատմամբ գտնվել լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, այսինքն՝ լինել միևնույն հնչույթի դիրքային տարբերակները¹¹, քանզի ավելի մեծ թվով դեպքերում նրանք գտնվում են հնչույթաբանական հակադրության մեջ: Ըստ էության, մեկ այլ տեսանկյունից, բայց նույն

¹¹ Տե՛ս Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 161-162:

խնդրին է առնչվում նաև Հ. Մուրադյանի դիտարկումն այն մասին, որ արդի հայերենի որոշ բարբառներում դրսևորվող *h>խ*, իսկ ուրիշներում, օր.՝ Ագուլիսի բարբառում, ընդհակառակն, *խ>h* հնչյունափոխությունները վկայում են այդ հնչյունների՝ «հնագույն շրջանում» (ըստ ամենայնի՝ նախագրային հայերենի փուլում) լծորդակիցներ լինելու մասին¹²: Հ. Մուրադյանը չի որոշակիացնում թե *h*-ն և *խ*-ն հնչոյթաբանական ինչպիսի հատկանիշով կարող էին լծորդություն կազմել, բայց առավել հավանական է, որ նկատի ունի «ձայնեղության-խլության» հատկանիշը, որովհետև արդի հայերենի որոշ բարբառներում՝ Արարատյան, Կարնո, Մշո, Բայազետի, ավելի ճիշտ՝ այդ բարբառների առանձին խոսվածքներում, ձայնավորներին ու ձայնորդներին նախորդող դիրքերում *h* (*h*)-ն ունի ձայնեղ արտաբերություն՝ *h* (*ʃ*) (հմմտ. *ակն>հ ագ*, *ականջ >հ անգանջ*, *անձրեւ>հ անձրրէվ*, *ընկեր>հ ընգեր*, *ուղեղ>հ ղուղ* (Կրն. բրբռ.), *աչք>հ աշկ*, *առու>հ առու*, *աղբիւր>հ ախպուր*, *խմանալ>հ իմանալ*, *ինքն>հ ինքը* (Արրտ. բրբռ.)¹³: Հավանաբար նշված բարբառներում ձայնեղ *h*-ի առկայությունը հիմք է տալիս ձայնեղության հատկանիշ վերագրելու նաև նախագրային հայերենի *h*-ին կամ առնվազն այդպիսին համարելու նրա դիրքային տարբերակներից մեկը:

Թե երբ և ինչպիսի հանգամանքներում է տեղի ունեցել *h>խ* հնչյունափոխությունը, ինչպիսի գործընթացների արդյունք է ձայնեղ *h* (*ʃ*)-ի առաջացումը արդի հայերենի բարբառներում, այս հարցերի վերաբերյալ հայերենագիտության մեջ արտահայտված պատկերացումները զգալիորեն տարբեր են, բայց դրանց քննությունը վերաբերում է պատմական (տարածամանակյա) հնչոյթաբանությանը: Դասական գրաբարի (V դ.) համաժամանակյա հնչոյթաբանությանը կարող է վերաբերել միայն վերոհիշյալ տիպի բառային կրկնակներում *h/խ* հարաբերակցության բնույթի հարցը, եթե, իհարկե, այդ կրկնակները գոյություն են ունեցել արդեն դասական գրաբարի փուլում, այլ ոչ թե հետգրաբարյան երևույթներ են: Դրանց առկայությունը գրաբարյան փուլում ընդունելու դեպքում, *h~խ* հնչոյթային հակադրությունից բացի, այդ բաղադրիչների միջև կտարբերակվեն նաև *ազատ փոփոխակման* հարաբերություններ, երբ երկու հնչոյթների ներկայացուցիչներ ծառայում են միևնույն իմաստի արտահայտմանը: Այսինքն՝ այնպիսի հարաբերություններ, ինչպիսին որ գոյություն ունի ռուսերենի <Г/Г> հնչոյթի հպական [r/g] և շփական [h/ɣ] տարբերակների միջև. հմմտ. [rʌpʌ] / [ɣʌpʌ]՝ “ropa” «լեռ», [ʃo r] / [ʃo ɣ]՝ “bor” «աստված» և այլն: Վերջին նկատառումն անիմաստ կլիներ, եթե հայ բարբառագիտության մեջ արտահայտված չլիներ տեսակետ, ըստ որի՝ բառակց-

¹² Տե՛ս Հ. Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 251-252, 264:

¹³ Տե՛ս Ար. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 131, Գ. Բ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 266, Հ. Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 276, 315, Ռազվիկ Մարկոսյան, Արարատյան բարբառ, Եր., 1989, էջ 74:

բի դիրքում *h>ju* հնչյունափոխությունը կարող էր տեղի ունենալ նաև նախագրային հայերենում՝ որպես ուրարտական ենթաշերտի ազդեցության հետևանք, որովհետև նշված հնչյունափոխությունը տարածված է հատկապես Վասպուրականի ու Պարսկահայքի և այդ տարածքներին մերձ հայկական բարբառներում (Վան, Մոկս, Ոզմ, Դիադին, Խլաթ, Մանազկերտ, Բաղեշ, Արծկե, Արճեշ, Շատախ, Մարաղա, Թավրիզ, Ուրմիա, Մալմաստ, Խոյ, Մակու), որոնց սահմանները համընկնում են Վանի թագավորության՝ Ուրարտուի (մ.թ.ա. 9-6-րդ դդ.) տարածման սկզբնական սահմաններին¹⁴: Ըստ այդմ, *h>ju* հնչյունափոխության առաջացման ժամանակի, հետևաբար նաև դասական գրաբարի շրջանում *h-ju* հնչույթային և հնչյունական առնչությունների մասին ամբողջական տեսակետ հնարավոր կլինի հայտնել միայն հիմնախնդրի տարածամանակյա քննությունից հետո:

Հ (h) - յ (y) առնչությունները ևս հնչույթաբանական միանշանակ եզրահանգումների հիմքեր չեն տալիս: Ընդհանուր առմամբ դասական գրաբարում *h - j* հարաբերակցությունը հնչույթաբանական է, որովհետև այն գործառական արժեք ունի հետևյալ նվազագույն զույգերում. հմմտ. *հաշտ* (-ի, -ից) «խաղաղասեր. ներող» ~ *յաշտ* (-ի, -ից) «զոհ, զոհաբերություն», - *հեղուլ* (-ղի, հե՛ղ) «թափել, դատարկել» ~ *յեղուլ* (-ղի, յե՛ղ) «փոխել, շրջել», - *հոյզ* (հուզոյ) «խեժ, կռեզ» ~ *յոյզ* (յուզից) «որոնում. շարժում», - *հետ* (-ոյ, -ոց) «ոտնահետք. նմանություն» ~ *յետ* «հետո, դեպի հետ»¹⁵, - *պահ* (-ու, -ուց) «պահելը. կարճ ժամանակ» ~ *յայ* (-ի, -ից) «ջին, փերի, դև», - *գահի* (*գահ* «բարձր տեղ» գոյ.-ի եզ. սեռ.-տր. հլ.) ~ *գայի* (*գալ* բայի անցյ. անկ. եզ. թ. 1-ին դ.), - *սկահաձև* (-ի, -ից) «գավաթի ձև ունեցող» ~ *սկայսաձև* «հսկայի տեսքով, քաջ» և այլն: Մյուս կողմից, սակայն, որոշ բառերում, հանդիպելով միևնույն դիրքում, *h-ն* և *j-ն* տարբերակիչ գործառույթ չեն իրականացնում: Այսպես. վստահորեն կարող ենք ասել, որ *հալ* (-ի, -աց) «սկիզբ, ծայր» և *յալ*¹⁶ «վերջ, ծայր», *հորու* (-ի, -աց) «խորթ հայր» և *յորայ* (-ի, -ից) (նույնը, ինչ որ *հորու*), *հինգ*, *հնգետասան* (-ի, ից) «տասնհինգ» և *յիսուն* (-սնի, -սնից)

¹⁴ Տե՛ս Ար. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 131, - Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 267:

¹⁵ Է. Աղայանը *հետ* «ոտնահետք. նմանություն» և *յետ* «հետո, դեպի հետ» բառերը ևս դիտարկում է որպես նույնիմաստներ, որից հետևում է, որ դրանցում նույնպես *h-j* առնչությունը գործառական չէ (տե՛ս Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 163-164): Տարածամանակյա հայեցակետում նրանք կարող են նույնական լինել, այսինքն՝ ունենալ միևնույն ծագումը (իհարկե, դա նույնպես քննելի հարց է), սակայն ակնհայտ է, որ դասական գրաբարում դրանք լիովին տարբեր բառեր են՝ իրենց միանգամայն տարբեր իմաստներով: Հետևաբար համաժամանակյա հայեցակետով այդ բառերում ևս *h-j* հարաբերությունը հնչույթային է:

¹⁶ Ըստ ՆՀԲ-ի՝ առանձին ոչ գործածական արմատ է, որը հանդիպում է, օր., *անյալ*, *յալետ*, *յալիտեան*, *յալելուլ* բաղադրությունների կազմում (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Եր., 1981, էջ 349): Բնիկ հայերեն բառ է, որը, ըստ Հ. Աճառյանի, սերել է հ.-ե. *pau- «ծայր» բառից (տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 390), իսկ Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում նրա ծագումը հ.-ե. *paus- «թողնել, բաց թողնել» արմատից (տե՛ս Գևորգ Ջահուկյան, ՀԱԲ, էջ 549):

(<*j^hiqhuni /< հ.-ե. *penk^uek'omt-/ բառի ամփոփումով) «հիսուն» բառային գույգերում համաժամանակյա հայեցակերպում գործ ունենք բառային տարբերակների հետ, որոնցում *h*-ն և *j*-ն գտնվում են ազատ փոփոխական, այլ ոչ թե գործառական, այսինքն՝ հակադրական հարաբերության մեջ: Բսկ թե երբ և ինչպես են առաջացել այդպիսի երկբնույթ հարաբերությունները, այդ հարցերի քննությունը նույնպես պատմական հնչույթաբանության խնդիրն է:

Հին հայերենի շփական բաղաձայնների համաժամանակյա քննությունը հիմք է տալիս ասելու հետևյալը.

1) Չնայած այն իրողությանը, որ հպական բաղաձայններին նախորդող դիրքում առկա է ձայնեղ և խուլ շփականների որոշակի բաշխվածություն, այն է՝ *q* [z] և *ɟ* [ž] ձայնեղները հանդիպում են ձայնեղ հպականներին, իսկ *u* [s] և *ɟ* [š] խուլերը՝ խուլ հպականներին նախորդող դիրքերում, բայց և այնպես դա դեռևս հիմք չի տալիս այդ հնչական միավորները համարելու միևնույն հնչույթի դիրքային տարբերակներ, որովհետև նույն դիրքերում նրանք նաև գործառական հակադրություններ են ձևավորում ինչպես միմյանց հետ, այնպես էլ այլ հնչույթների: Համաժամանակյա հայեցակերպում կարող է խոսք լինել միայն թույլ արտահայտված ենթահնչույթային հարաբերությունների դրսևորման մասին՝ որպես նախագրաբարյան շրջանից պահպանված մնացուկների, որի պատճառների քննությունը վերաբերում է տարածամանակյա հնչույթաբանությանը:

2) Միաշարք *ju* [x]-ն և *h* [h]-ն նույնպես լիովին ինքնուրույն հնչույթներ էին: Որոշ դեպքերում նրանք միմյանց հետ, իսկ *h* [h]-ն՝ նաև *j* [y]-ի հետ գտնվել են ազատ փոփոխական հարաբերության մեջ, որը, սակայն, որևէ կերպ չի կարող հարցականի տակ դնել նրանց հնչույթային կարգավիճակը հին հայերենում:

Բանալի բառեր – *Հ. Հյուբշման, Է. Աղայան, երկշարք շփականներ, միաշարք շփականներ, հնչույթային կարգավիճակ, լրացուցիչ բաշխում, ենթահնչույթ, ազատ փոփոխակում*

ВАРДАН ПЕТРОСЯН – Фонологическая характеристика древнеармянских фрикативных (Синхроническая точка зрения). – В древнеармянском языке существовали двухрядные (*q* [z], *u* [s], *ɟ* [ž], *ɟ* [š]) и однорядные (*ɟ* [v], *ju* [x] և *h* [h]) фрикативные согласные, из которых **q**, **ɟ**, **ɟ** были звонкими, а остальные – глухими. Хотя **q** и **u**, с одной стороны, а с другой – **ɟ** и **ɟ** занимают взаимоисключающие позиции, в частности, звонкие не могли предшествовать глухим смычным, а глухие – звонким смычным, этого недостаточно, чтобы рассматривать отношения дополнительной дистрибуции между этими согласными, поскольку у отмеченных глухих и звонких аффрикат сформировались различительные противопоставления не только с другими фонемами, но и между собой. Сказанное относится и к однорядным **ju** и **h**. В отдельных случаях эти звуки между собой, а **h** – также с полугласным **j** находятся в отношениях свободного варьирования, но и

они являлись полноправными компонентами древнеармянской фонологической системы, поскольку создавали функциональные отношения как с другими фонемами, так и между собой. Между двухрядными аффрикатами отношения дополнительной дистрибуции существовали, пожалуй, в дограбарском армянском, на этапе их формирования. Однако изучение данного вопроса входит в сферу исследований исторической фонологии.

Ключевые слова: Г. Гюбшман, Э. Агаян, двухрядные ффрикативные, однорядные ффрикативные, фонологический статус, дополнительная дистрибуция, субфонема, свободное варьирование

VARDAN PETROSYAN – *Phonemic Characteristics of Old Armenian Fricatives (synchronic examination)*. – Old Armenian had paired (cf. *q* [z], *u* [s], *ɟ* [ʒ], *ʒ* [š]) and single (cf. *ɥ* [v], *ʃu* [x] և *h* [h]) fricatives of which *q*, *ɟ*, *ɥ* were voiced and the rest - voiceless. Though *q* and *u* on the one hand, and *ɟ* and *ʒ* on the other hand held mutually excluding positions, particularly the voiced ones could not precede voiceless fricatives and the voiceless consonants – voiced fricatives, this does not provide sufficient grounds to view additional distributive relations among these consonants in the synchronic examination since these voiced and voiceless fricatives have developed distinctive contrasts not only with other phonemes but with each other, as well. The same goes for the single consonants *ʃu* and *h*. In certain cases these sounds and *h* also along with the semi-vowel *j* are in a relationship of free modification. However, they, too, were full components of the Old Armenian phonemic system as they established functional relations with not only other phonemes but also with each other. There used to be additional distributive relations among fricatives during the stage of their formation – in Pre-Grabar Armenian. This, however, is a matter of Armenian historical phonetics.

Key Words: H. Hyubshman, E. Aghayan, paired fricatives, single fricatives, phonemic status, additional distribution, sub-phoneme, free modification

Ներկայացվել է՝ 18.09.2020, Գրախոսվել է՝ 19.10.2020, Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020